

1.1.2. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

2015թ. հունվար-հունիսին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 83535.8 մլն դրամ՝ 2014թ. հունվար-հունիսի 74854.5 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 7.4 տոկոս, ինդեքս-դեֆլյատորը՝ 3.9 տոկոս:

2015թ. հունվար-հունիսին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 558.6 հազ. դրամ, 1171.4 ԱՄՆ դոլար կամ 1048.8 Եվրո՝ 2014թ. հունվար-հունիսի 502.5 հազ. դրամի, 1219.8 ԱՄՆ դոլարի, 890.2 Եվրոյի դիմաց:

*Համախառն ներքին արդյունքի տվյալներն արտադրական եղանակով՝
ըստ ՏԳՏԳ խմբ. 2*

Ծածկագիրն ըստ ՏԳՏԳ խմբ.2		Ընթացիկ գներով (մլն դրամ)		իրական հավելաճի տեմպը (տոկոս- ներով)	ՀՆԱ-ի կառուցվածքը(%)	
		2014թ. հունվար- հունիս	2015թ. հունվար- հունիս		2014թ. հունվար- հունիս	2015թ. հունվար- հունիս
	Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	74854.5	83535.8	7.4	100.0	100.0
	Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	4827.3	3202.4	56.0	6.5	3.8
	Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	70027.2	80333.4	110.9	93.5	96.2
	ՖԱԱԶԾ	-4833.0	-5168.8	106.8	-6.5	-6.2
A	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	8503.8	11340.5	142.1	11.4	13.6
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	5314.4	5989.2	111.8	7.1	7.2
C	Մշակող արդյունաբերություն	3462.1	3700.4	102.6	4.6	4.4
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	7255.3	8392.0	109.2	9.7	10.0
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	261.2	215.5	82.3	0.3	0.3
F	Շինարարություն	5909.1	4893.7	86.2	8.0	6.0
G	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	3312.4	3468.0	100.8	4.4	4.2
H	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	1115.3	1411.4	136.8	1.5	1.7
I	Կացության և հանրային սննդի կազմակերպում	144.7	164.9	94.8	0.2	0.2
J	Տեղեկատվություն և կապ	3230.1	3756.4	118.9	4.3	4.5
K	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	10279.1	11834.7	106.9	13.7	14.2
L	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	472.8	498.2	105.7	0.6	0.6
M	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	377.0	441.3	106.6	0.5	0.5
N	Վարչարարական և օժանդակ գործունեություն	536.8	677.9	138.6	0.7	0.8
O	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	17396.5	20820.2	108.4	23.3	24.9
P	Կրթություն	3983.0	4017.3	99.0	5.3	4.8
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	2640.7	2881.0	106.3	3.5	3.4
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	562.6	595.5	95.3	0.8	0.7
S	Սպասարկման այլ ծառայություններ	103.3	114.8	104.4	0.1	0.1
T	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	--	289.3	-	--	0.3

ՀՆԱ-ի արձանագրված 7.4 տոկոս հավելաճի տեմպի 4.8 տոկոսային կետն ապահովել է գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնորսությունը, 2.0 տոկոսային կետը՝ պետական կառավարում և պաշտպանությունը, պարտադիր սոցիալական ապահովագրությունը, 1.0 տոկոսային կետը՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունը: